

368.4
\\$ - 12

Մ. Լ. ԹԱՐՅՈՒԿԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՅԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՂԱՅԻՆ
ՈՐԵՆՔՆԵՐԻ

Թարգմ. Սմբատ Ա.

Յերևան—1925.

1 MAR 2010

368.4
S-12

Մ. Լ. ԹԱՅՐԻԿՈՎԾ

Ար

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒ-
ԹՅՈՒՆՆ ԸՆՏ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ
ՈՐԵՆՔՆԵՐԻ

Տպագր. Տրեստի Դարաքիլիսայի Բաժանմունք.

Թարգմ. Սմբատ Ա.



Ա. Մ. ՄԱՍՆԻԿԵՎԻՇ ՁԵՐԻՆ - 1925

Աշխատ

148 546 Ա. Ա.

15912-57

ՑԱՆԿ

ՅԵՐԵԱ

1.	Ի՞նչ եյին պահանջում՝ բանվորները սոցիա- լական ապահովագրության ասպարիդում	3
2.	Խոչպես եր իրագործում այդ պահանջները ցարական կառավարությունը	4
3.	Մենշենցյան ապահովագրության որենքը	8
4.	Հոկտեմբերն ու սոցիալական ապահովա- գրությունը	9
5.	Սոցիալական ապահովագրությունից դեպի սոցիալական ապահովություն	11
6.	«Հայրենիքի փրկիչների» ապահովագրական որենքները	13
7.	Սոց.-ապահովագրությունը կազիտալիստա- կան յերկրում	15
8.	Սոցիալական ապահովագրությունը նոր տնտեսական պայմաններում	19
9.	Ռվելը են յենթարկվում սոցիալական ա- պահովագրությանը	21
10.	Սոցիալական ապահովագրության միջոցները .	22
11.	Սոցիալական ապահովագրության մարմին- ների վարչությունը	24
12.	Ի՞նչ է տարիս բանվորությանը սոցիալա- կան ապահովագրությունը	26
13.	Ժամանակավոր անաշխատունակության նպաստ	26
14.	Մայրության ապահովագրությունը	27
15.	Գործազրկության նպաստ	27
16.	Հաշմանդամություն	31
17.	Ապահովագրվածների բժշկական ոգնությունը	36
18.	Յեղագիտում	42

1. Ի՞նչ է ՅԵՐԵԱՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՍՈ-
ՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆՊԱՐԻՉՈՒՄ

Յերբ բանվոր դասակարգը ամրապնդվեց և կազ-
մեց այնպիսի մի ուժ, վորին բուրժուազիան ստիպ-
ված յեղավ հաշվի առնել, բանվորությունը սկսեց
պահանջներ դնել՝ անպայման իրավանացնելու սոցիա-
լական ապահովագրությունը. այսինքն, ապահովել
բանվորներին, յերբ նա ժամանակավոր կամ մշտական
անաշխատունակության և թե գործազրկության հե-
տեւանքով կորցնում ե իր աշխատավարձը: Նույնպես
և ընտանիքի կերակրողի մահվան դեպքում, ապահո-
վել ընտանիքի անդամներին:

Բանվորները պահանջում եյին բոլոր վաճու աշ-
խատանք կատարողների վերաբերմամբ տարածել սո-
ցիալական ապահովագրություն և վոր սոցիալական
ապահովագրության միջոցների համար վճարումներ
կատարեն միմիայն գործատերերը—վորպեսզի անաշ-
խատունակության և գործազրկության դեպքում ապա-
հովագրական մարմինները բանվորներին վճարեն ի-
րենց լրիվ աշխատավարձը: Յեկ վերջապես, բանվոր-
ները պահանջում եյին, վոր ապահովագրական մար-
մինների գործերի վարելը ամբողջովին գտնվի բան-
վորների ձեռքին և վոչ գործատերերի:

Ահա բանվոր դասակարգի ապահովագրական ծը-
րագրի հիմնական կետերը, վորոնց համար կափ եր
մզում Ռուսաստանի պրոկտորիատը:

Այսպիսի ծրագրի համար մինչև այժմ կափ ե-

մղում Արևմտյան Յեվրոպայի և Ամերիկայի պրոլետարիատը, զորտեղ դեռ ևս իշխանության գլուխ են կանգնած կապիտալիստները:

2. ԻՆՉՊԵՍ ԵՐ ԻՐԾԳՈՐԾՈՒՄ ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԵՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Երբ 1904—1905 թ. Ռուսաստանի բանվոր դասակարգը ալեկոծվեց, յերբ բանվորական շարժման ալիքները սպառնացին խորտակել ցարական գահն ու նրա հետ կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը, ցարական նախարարները վորպեսզի բանվորներին հանգստացնեն, համոզում ենին, վոր իսկապես անհրաժեշտ և իրականացնել բանվորների պահանջները սոցիալական ապահովագրության ասպարիզում:

Բայց հենց վոր ցարական կառավարությանը հաջողվեց քայլայել բանվոր դասակարգի կազմակերպությունը, հաջողվեց դուրս քաշել բանվորության միջից ամենահեղափոխական ու պրոլետարական կռվի համար համառ կերպով կանգնած բանվորներին, նրանք դադարեցին սոցիալական ապահովագրության մասին խոսելուց:

«Բանվոր դասակարգը կործանվեց, նա այլև մեզ համար սարսափելի չե. ինչու համար այլև մտածել նրա ապահովագրության մասին. կհիվանդանա, թե վոտքը կկոտրվի, կամ կմեռնի բանվորը, մենք ուրիշ հարյուրավորները կդառնենք դրանց փոխարեն»:

Այսպես եյին մտածում ցարական նախարարները: Յեկապահովագրական դրամարկղների փոխարեն, նրանք շարունակեցին կառուցել բանտեր, կանգնե-

ցնել կախաղաններ՝ բանվոր դասակարգի պաշտովաճանների համար:

Վերջապես բանվոր դասակարգը սթափվեց այդ ուժեղ հարվածներից:

Նորից ալեկոծվեց ծով բանվորությունը, գործադուները, զորպես հեղափոխության փոթորկի ահարկու նախագուշակ, ծավալվեցին ամբողջ Ռուսաստանում:

Նորից հուզվեցին ցարի ծառաները և 1912 թվի հունիսի 23-ին կալվածատերերի պետական դռման (Ռուսաստանի պարլամենտը) բանվորներին հանգըտացնելու համար որենք հրատարակեց, վորով առաջին անգամ Ռուսաստանում մտցվեց սոցիալական պահովագրությունը:

Ինչպես և ցարական պարլամենտի որենքից ըսպասելի յեր, սա մի զիջողություն եր, վոր արվեց բանվորական հեղափոխության շարժման գրոհից ըստիպված, ուստի չիրականացրեց պրոլետարիատի պահանջած սոցիալական ապահովագրությունը:

Ցարական այս որենքը տարածվեց միայն յերկուսից մինչև յերկու և կես միլիոն գործարանային բանվորների վրա, իսկ մյուսները՝ տասնեւել ու կես միլիոն վարձու բանվորներն ու ծառայողները, հեգանդությունների, հաշմանդամության և այլ գեպերում մնացին առանց վորեւ ոգնության:

Ցարական սոցիալական ապահովագրությունը տարածվում եր միայն այն ձեռնարկությունների վրա, վորտեղ բանվորների թիվը 20 հոգուց պակաս չեր—յեթե գործարանը աշխատում եր շոգեշարժ ուժով (շոգիով կամ ելեկտրականությամբ), իսկ յեթե մեքենաշարժ ուժ չկար գործարանում, բանվորների թիվը պետք ելիներ 30-ից վոչ պակաս:

ՀԿԱՅԱՆԱԿԻ, յեթե դու աշխատում ես այնպիսի
ձեռնարկության մեջ, վորտեղ կա մեքենաշարժ ուժ,
և այնտեղ 16 կամ 18 բանվոր և աշխատում, յեթե
դու հիվանդանաս, քեզ դուրս կըպրտեն փողոց—բաղ-
դի բերմունքին, ընտանիքդ թողնելով քաղցի ու կա-
րիքի մեջ:

Փոքր ձեռնարկությունների բանվորները դուրս
եյին մնացել սոցիալական ապահովագրությունից:

Սոցիալական ապահովագրությունը բոլորվին
չեր տարածվում գյուղատնտեսական ձեռ-
նարկությունների ու յերկաթուղային բանվորների,
տնային ծառաների և առերրա-արդյունաբերական
հիմնարկներում ծառայողների վրա:

Ապահովագրական մարմինների միջոցները կազ-
մում եյին այն գումարները, վորոնք մուծում եյին,
թե բանվորները և թե գործատերները:

Խնչպես և սպասելի յեր, ցարական որենսգիրը
գլխավոր ծանրությունը գրել եր իրենց, ապահովա-
գրվածների վրա. ապահովագրական մուծումների $\frac{3}{5}$
մասն ընկնում եր բանվորների վզին և միայն $\frac{2}{5}$ -ը՝
գործատերների վրա: Այսպիսով բանվորի աշխատա-
վարձը բնական կերպով կրճատվում եր, վորով բան-
վորի համար մի նոր ցավ ևս ավելացավ:

Դրամարկյանները բանվորներին ապահովում եյին
շատ անկանոն. հիվանդության գեղքում ամուրիններին
նպաստ տրվում եր աշխատավարձի $\frac{1}{4}-ից$ մինչև $\frac{1}{2}$ -ը,
իսկ ընտանիքորներին $\frac{2}{3}-ից$ վոչ ավել. նույնքան
ել տրվում եր հղի կանանց, յերկու շաբաթվա համար
մինչև ծնունդ և յերկու շաբաթվա յել՝ ծննդից հետո:

Հիվանդության համար նպաստ տրվում եր մին-
չև 26 շաբաթվա համար, իսկ դրանից հետո հիվանդը
թողնվում եր բաղդի բերմունքին:

Ինչ վերաբերվում է բժշկական ոգնությանը,
խոսել անգամ չարժե, վարովհետեւ բանվորներն ավելի
շուտ վերադասում եյին իրենց վերջին կոպեկը ծախ-
սել՝ դիմելով մասնավոր բժշկի:

Բացի այդ, ցարական որենսգրությամբ ապահո-
վագրական մարմինների, հիվանդանոցային գանձար-
կիների, նահանգական ատյանների և գլխավոր ապա-
հովագրական խորհրդի գործերի վարելը փաստուն
հանձնված եր չինովիկների ու վարձող գործատերների
ձեռքը, վորոնք միշտ ել վարվում եյին համաձայն ի-
րենց կամքի:

Նահանգական ապահովագրական ատյանում և
խորհրդում գլխավոր գեր եյին կատարում այնպիսի
մարդիկ, վորոնք բանվորական շահերի բացարձակ
թշնամիններն եյին:

Այսպես որինակ, նահանգական ապահովագրա-
կան ատյանը, վոր խոշոր իրավունքներ ուներ ապա-
հովագրական գործում, կազմված եր՝

1. Նահանգապետից (ինքն ել ատյանի նախագա-
հըն եր),

2. վոլունահանգապետից,
3. յերկու գործարանային տեսուչներից,
4. մեկ չինովիկից—նշանակված արտաքին գոր-
ծոց նախարարի կողմից,

5. արքունի գանձարանի (казенная палата) կա-
ռավարչից,

6. բուժական տեսչից,

7. նահանգական վեմստվոյի 2 ներկայացուցիչ-
ներից (գլխավորապես ազնվականներ),

8. քաղաքային խորհրդի մեկ ներկայացուցչից;
- 9) յերկու ներկայացուցիչ գործատերներից և
10. յերկու ներկայացուցիչ բանվորներից:

3. ՄԵՆՇԵՎԻԿՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ

Փետրվարյան հեղափոխությունը շատ քիչ բանով բարելավեց բանվորների սոցիալական ապահովագրությունը. մենշևիկներն ու եսերներն իշխանության գլուխ անցնելով՝ վորոշեցին բոլոր աշխատանքները կիսել կապիտալիստների և կալվածատերերի հետ միասին:

«Հեղափոխական» մենշևիկների և եսերների կողքին կառավարության մեջ բազմել ելին մեզ հայտնի Գուշկովները, Միլյուկովները, Կիշկիններն ու Բուրիշինները, վորոնք կազմակերպված կապիտալիստների ներկայացուցիչներն ելին հանդիսանում:

Այսպիսի պայմաններում բանվորներն իրենց ապահովագրական ծրագրի իրագործման մասին յերազել անգամ չելին կարող:

Սկսվեց համաձայնողական քաղաքականությունը, այսինքն «վոչխարներն ել լինեն վողջ-գայլերն ել կուշտա». և բանվորների առաջ մի բան նետեն, և կապիտալիստներին «բեղամաղ չանեն»:

Ճիշտ այս նպատակներին եր հետեւում ժամանակավոր կառավարության 1917 թ. հունիսի 25-ին հրատարակած որենքը՝ «բանվորների ապահովագրության մասին, հիվանդության դեպքում»:

Աննշան թվով ավելացավ ապահովագրվածների քանակը. իսկ ապահովագրական մուծումները կատարվում ելին նախկին ձեռով վոչ միայն վարձող գործառերերն ելին այդ վճարումները մտցնում, այլ և ապահովագրվածներն, մի տարբերությամբ միայն, վորժամանակավոր կառավարության որենքով յերկու կողմերն ել (թե ապահովագրվածները և թե գործառերերը), վճարումները կատարում ելին հավասար:

Նախկին ձեռով գանձարկղներն իրավունք չունեցին ժամանակավոր անաշխատունակության համար ապահովագրվածների ոռոճիկի $\frac{2}{3}$ մասից ավելի նպաստ բաց թողնել:

Ինչ վերաբերվում ապահովագրական մարմինները վարելուն, ճիշտ ե, վոր այստեղ ևս արված եր մի քայլ այս հաշվով՝ «ինչքան մեզ—այնքան ձեզ»: Թեպետ և գործատերերը հիվանդանոցային գանձարկղների վարչության մեջ չելին մասնակցում, բայց դրա փոխարեն նրանք հիվանդանոցային գանձարկղների վերատուգիչ հանձնաժողովներում ունեյին իրենց ներկայացուցիչները, նույնը և ապահովագրական ատյաններում ու խորհրդում:

4. ՀՈԿՏԵՄԲԵՐՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ միայն իշխանությունն անցնելով աշխատավորության ձեռքը, հնարավոր յեղավ իրականացնել բանվորական ապահովագրական ծրագիրը:

Յեզ նա իրագործվեց:

Խորհրդային կառավարությունը հրատարակեց սոցիալական ապահովագրության վերաբերյալ մի շարք որենքներ, վորով նույսատանը ապահովագրական խնդրում բռնեց առաջին տեղը:

Խորհրդային իշխանության բռնած ուղին տարբերվում ե Կերենսկու համաձայնողական կառավարությունից նրանով, վոր Խորհրդային իշխանությունը սոցիալական ապահովագրությունն իրագործեց վոչ թե խոսեվ, այլ զարծով:

Ռուսաստանում սկիզբ գրվեց գործազրկության վերաբերյալ ապահովագրությունը:

Յեթե Սրբամտյան Յեվրոպայում՝ հիվանդության վերաբերյալ ապահովագրությունը գոյություն ունի վաղուց (Գերմանիայում՝ 1883 թվից, Ավստրիա-շատ վաղուց (Գերմանիայում՝ 1888 թ., Վենգրիայում՝ 1891 թ., Նորվեգիայում՝ 1909 թ., Սերբիայում՝ 1910 թ., Անգլիայում՝ 1911 թ. և այլն), նույնը չի կարելի ասել գործազրկության ապահովագրության մասին:

Զնայած բոլոր յերկրներում, մանավանդ պատերազմից հետո, նկատելի յե խոշոր անգործություն. մենք չենք տեսնում, վոր բուրժուական յերկրները լուրջ միջոցներ ձեռք առնեն գործազրկության դեմ:

Յեվ իհարկե, միամտություն կլիներ սպասել նըրանցից կարուկ միջոցներ:

Բուրժուական պետորյունները չեն կարող լուրջ կերպով պայմանական անգործություն դեմ այն հասարակ պատճառով, վոր այս հանգամանքը ծառայում է կապի-տականության ձեռքին վորացե զենք, բանվորների աշխատավարձը պակասեցնելու համար:

Վորքան գործազրկության մեծ լինի, այնքան եժան և վարձատրվում բանվորների աշխատանքը:

Միայն Խորհրդային իշխանությունն է, վոր իր առաջացման սկզբից լուրջ կերպով զբաղվել է գործազրկության բնուրով. 1917 թ. գեկտեմբերի 11-ին հրատարակելով առաջին «Կանոնադրություն գործազրկության ապահովագրության մասին»:

Շուտով, գործազրկության ապահովագրություն մտցնելուց հետո, Համառուսական կենտրոնական Գործադիր Կոմիտեն հրատարակեց հիվանդության առթիվ ապահովագրության դեկրետ:

Բոլոր վարձու աշխատողների վրա այսպիսի ապահովագրություն տարածելով, Խորհրդային իշխանությունն ազատեց ապահովագրագաներին վճարումներ մտցնելուց և գանձարկության գործերի վարելն ել ամբողջովին բանվորների ձեռքը տալով, վերապահեց գանձարկության լայն իրավունքներ բժշկական ոգոնության ասպարիզում և ապահովագրվածներին նըրապաստ բաց թողնելու ինքրում:

Սոցիալական ապահովագրության այս բոլոր բարեփոխություններով չբավականացավ Խորհրդային իշխանությունը:

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԳԵ- ԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային իշխանությունն ամբափնդելով, գործարանատերերից խլեց գործարանները, կալվածատերերից ել հողը և տվալ աշխատավորության ձեռքը:

Ամբողջ աշխատավորական հանրապետության տերերը բանվորներն ու գյուղացիներն եյին: Նրանք անողոք կոփվ հայտարարեցին նրանց զեմ, ովքեր փորձում եյին առանց աշխատանք թափելու ապրել աշխատավորության հաշվին:

Ըստհակառակը, յեթե բանվորն այս կամ այն պատճառով գուրս եր մնաւմ աշխատավորության շարքերից, Բանվորա-Գյուղացիական Հանրապետությունը հենց այդ վայրկյանից ցույց եր տալիս նրան հարկ յեղած հոգացողությունը:

1918 թ. հոկտեմբերի 31-ին Խորհրդային իշխանությունը հրատարակեց «Աշխատավորության սոցիալական ապահովության որենք», վորով մտցվեց բոլոր տեսակի ապահովություն (ժամանակավոր անաշ-

խատունակության, գործազրկության, հաշմանդամության, վորբության, այրիների վերաբերմամբ և այլն), վորով վոչ միայն ապահովվում եյին վարձու բանվորները, այլ և ուրիշի աշխատանքը շահագործող տնայնագործներն ու արհեստավորները:

Սոցիալական ապահովության միջոցները վոչ թե ապահովագրական մուծումներն եյին կազմում, այլ պետությունն ինք եր այդ նպատակով բաց թողնում հատուկ գումարներ:

Դա բացատրվում ե շատ հասարակ կերպով. յերբ յերկրի արդյունաբերությունը գտնվում ե իր, պետության ձեռքում և վոչ մասնավոր անհատների, պետությունն ինքն ել վճարումներ և կատարում, ուստի և ապահովագրական մուծումներ կատարելն ավելորդ համարվեց, թե չե գուրս կգար, վոր պետական միջոցները մի գրանից մյուս գրանն են մոցվում (պետական արդյունաբերությունից—պետական ապահովության): *

Սոցիալական ապահովության կիրառումը թողնված եր յենթաբաժինների ու աշխատանքի պաշտպանության վրա:

Յերբ պետությունը աշխատավորության ապահովության գործը վերցրեց իր վրա, բանվոր դասակարգի կեղծ բարեկամներն աշխատեցին ոգտագործել այս հանգամանքն իրենց աղիտացիոն նպատակների համար, բայց նրանց այդ բանը չհաջողվեց:—Տեսիք, —ասում եյին նրանք, բոլշևիկներն այս կարևոր գործը հանձնեցին պետությանը:

—Յեվ լավ ել արին,—պատասխանեցին գիտակից բանվորները, —վորովնետև պետությունը մենք ինքներս ենք.

6. „ՀԱՅՐԵՆԻՑԻ ՓԲԿԻ ԶՆԵՐԻ“ ԱՊԱՀՈՎԱԳՐԱ- ԿԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ

Խորհրդային իշխանության թշնամիները՝ Կոլչակը, Դենիկինը և ուրիշները Ռուսաստանի բանվորներին ու գյուղացիներին խոստացան «վոսկի սարեր»:

Ի՞նչ եյին խոստանում բանվոր դասակարգին այդ հայրենիքի ու ժողովրդի փրկիչները» սոցիալական ապահովագրության ասպարիգում:

Վերցնենք, որինակ, թեկուզ Կոլչակի՝ «Համայնքուսիայի կառավարչի» որենքը, վոր յերազում եր հեռավոր ու ցուրտ Սիբիրից իր մայրաքաղաքը տեղափոխել Ռուսաստանի սիբարը՝ Մոսկվան:

Ի՞նչպիսի ապահովագրական ծրագիր անցկացրեց նա իր «վրկարար սվիններով»:

Կոլչակյան կառավարության աշխատանքի նախարար, նախկին մենշևիկի Շումլովսկին 1919 թ. հունվարի 8-ին Սիբիրում հրատարակեց հիվանդության վերաբերյալ սոցիալ ապահովագրության որենք:

Այդ որենքով ապահովագրվածների թիվը բավականին պակասեց, վորովնետև մեծ քանակությամբ բանվորներ ապահովագրության յենթարկվեցին: Բանվորները նորից ստիպված յեղան իրենց աղքատիկ աշխատավարձից վորոշ մաս հատկացնել սոցիալական ապահովագրությանը: Ապահովագրական մարմինների գործերի վարելը փաստորեն նորից անցավ վաձող գործատերերի ու չինոմիկների ձեռքը:

Այսպես, ապահովագրական ատյանը կազմված եր՝

1. Նահանգական կառավարչից (նախագահ),
2. Աշխատանքի տեսչից,
3. Գործարանային ավագ տեսչից,
4. Շրջանային ճարտարապետից,

5. Պետական կոնտրոլի ներկայացուցչից,
6. Բուժական տեսչից,
7. Նահանգական զեմստվոյի 2 ներկայացուցիչներից,
8. Քաղաքային խորհրդի մեկ ներկայացուցչից,
9. Յերկու ներկայացուցիչներ վարձող գործատերերի կոմիտից և
10. Յերկու ներկայացուցիչ ել բանվորներից:

Այսպիսով կոլչակյան կառավարության և «առցիալիստ» նախարար Շամլովսկու որենքով, ապահովագրական ատյանը տարրերում եր ցարականից նըրանով միայն, վոր... վերջինում յերկու չինոֆիկ ավել եր բազմած:

Այս եր բոլորը:

Ցարական 13 վոչ պրոլետարական ձայների փոխարեն, փրկիչների ապահովագրական ատյանում կային կոլչակյան 11 վոչ պրոլետարական ձայներ, վորոնք խեղում եյին մնացած յերկու բանվորական ներկայացուցիչների ձայները:

«Փրկիչների» սոցիալական ապահովագրությունը բնորոշելու համար, ցույց տանք հետևյալը. Տոմակում տեղի ունեցավ գանձարկիների ներկայացուցիչների համագումար, վորը ծանոթանալով սոցիալական ապահովագրական որենքի նախագծի ու ընդհանուր կանոնագրության հետ, բանաձև հանեց. Սրանով համագումարը չնայած իր թշնամական վերաբերմունքին գումար սոցիալիստական վերաբերմունքին լուրջ վերաբերմունքին սոցիալական ապահովագրության գործը նորից վատացավ և վոր՝ «Յեթե ներկայում աշխատավոր դասակարգը ձգտում է ձեռք բերել լրիվ սոցիալական ապահովագրություն, պետք ե հետ

մղի անամոթ բուրժուազիայի ճնշումը, վոր բացորոշ կանգնած է ուսակցիայի դրոշի տակ»:

Ուստի՝

«Միբերի հիվանդանոցային գանձարկիների առաջին համագումարը, մասնակցությամբ Ուրալի հիվանդանոցային գանձարկիների ներկայացուցիչների և սահմանադիր ժողովի յերկրային կոմիտեյի անդամների, —վորոշեց՝

ա) ամենավճռական կերպով բողոքել բոլոր սահմանափակումների ու չարամտությունների դեմ, վորով ձգտում են սոցիալական ապահովագրության ասպարիզում բանվոր դասակարգի ձեռք բերած բոլոր նվաճումները խորտակել. —վորտեղից ել վոր նրանք դուրս յեկած լինին»:

Իհարեւ, այս «թղթի» բողոքը թղթի վրա ել մնաց. կազմակերպված բուրժուազիան «փրկել հայրենիքը բոլեկիկներից» լուսնգի տակ՝ շարունակեց խափանել բանվոր դասակարգի հիմնական նվաճումները:

Միայն բանվորներն ու գյուղացիներն իւնենց կարող կամքով մաքրելով այդ փրկիչներից ամբողջ Ս. Խ. Հ. Միության տերրիտորիան, ապահովագրական գործին սպառնացող վտանգի առաջն առան:

Ահա սոցիալական ապահովագրության պատմության մի եջ, վոր ամեն մի բանվոր պետք է հիշի:

7. ՍՈՅԻԱԼԻՍԿԱՆ ԸՊԱՀՈՎԵԳԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՈՒԹՈՒՄ

Թույլ տուր, ընթերցող, քեզ հետ մի փոքրիկ «Ճանապարհորդություն» կատարել դեպի կապիտալիստական յերկրները. արժե, թեկուզ աչքի տակով տեսնել, ինչ և կատարվում այստեղ բանվորների սոցիալական ապահովագրության ասպարիզում:

Նախ դիտենք մեր հարևան Գերմանիային. ճիշտ է, այստեղ ե, վոր առաջին անգամ սկիզբ ե առել սոցիալական ապահովագրությունը, բայց նա այդ ուղղությամբ շատ ե հետ մնացել մեղնից, վորովհետեւ այնտեղ դեռ ևս թագավորում են կապիտալիստները:

Գերմանիայում ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում ե միայն հիվանդության 4-րդ որից սկսած, այն ել վոչ թե լրիվ աշխատավարձի հաշվով, այլ նրա $\frac{1}{2}$ -ից— $\frac{3}{4}$ -ի չափով:

Վարձողը ապահովագրական գարձարկղին վճարում ե ապահովագրական մուծման միայն $\frac{1}{3}$ մասը. մնացած $\frac{2}{3}$ մասը մուծում ե ինքը՝ ապահովագրվածը: Հիվանդանոցային գանձարկղների վարչության մեջ վարձողները նույնպես ունին իրենց ներկայացուցիչները:

Գերմանիայի մայրաքաղաքում՝ Բերլինում գործադրկության նպաստ տրվում ե միջին աշխատավարձի հազիվ $\frac{1}{5}$ -ից մինչև $\frac{1}{6}$ մասը.

Այս ել ձրի չի տրվում, վորովհետեւ 1924 թ. հունվարի 28-ի գեկրետի հիման վրա, նպաստ ստացող գործազուրկները պարտավոր են շաբաթական 16 ժամ ծրիապես հասարակական բնույթ կրող աշխատանքներ կատարել:

Ավտորիայում ապահովագրվածը վճարում ե ապահովագրական մուծումների $\frac{2}{3}$ մասը, իսկ գործատերը միայն $\frac{1}{3}$ մասը ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում ե որական միջին աշխատավարձի $80^0/0$ -ը:

Նույն չափով նպաստ ե տրվում հղիության ու ծննդաբերության համար, 6 շաբաթ տևողությամբ սկզբից և 6 շաբաթ տևողությամբ ծննդից հետո.

Գործատերերը քաղաքային գանձարկղների նա-

խագահության մեջ ունեն $\frac{1}{3}$ ձայն, իսկ գյուղատեղական գանձարկղներում՝ $\frac{2}{5}$ ձայն:

Ֆրանսիայում մինչև այժմ կապիտալիստները խոշնդրության հանդիսանում սոցիալական ապահովագրության պարտադիր դարձնելուն, մի շաբաթ պատըր վակները առաջ բերելով, յերբ պարլամենտի գանձական գանձական առաջնաժողովներում այդ հարցը քննության ե առնվում:

Առայժմ բանվորների «ապահովության» գործը տանում են կամավոր ապահովագրական կազմակերպությունները, վորտեղ մուծումներ կատարում են միայն իրենք, բանվորները: Այդ պատճառով պրոլետարիատի խողոր մասը, չնորհիվ չնշին աշխատավարձի, զրկված ե իր գեմոկրատիկ հայրենիքի այդ գրկամասնությաց: Հետևապես, ժամանակավոր անաշխատագրիքներից»: Հետևապես, ժամանակավոր կամ նման դեպքերում, բանվորը մնում ե բոլորովին առանց ապահովության:

Իտալիայում ժամանակավոր անաշխատունակության, գործազրկության, վորբացման, այրիացման և այլ գեպքերում, պարտադիր սոցիալական ապահովագրություն բոլորովին գոյություն չունի:

Վերջերս մտածված ե միայն հաշմանդամության ու ծերության վերաբերյալ պարտադիր ապահովագրություն, վորի միջոցները կազմում են ապահովագրվածների ու վարձողների մուծումները, հավասար կերպով:

Հաշմանդամության համար նպաստ կարող են ստանալ միայն նրանք, ովքունքության կատարել են 122 օպբարփա մասնակիություններ:

Մացված ե նույնականացնելու պարտադիր ապահովագրություն մայրության վերաբերյալ, վորի համար գլուխական բանական գույքության վերաբերյալ:

ապահովագրվածն ինքն ել պետք եւ մուծումներ կատարի գանձարկղին: Այս նպաստը արվում եւ միանվագ 100 լիրայի չափ (մոտ 9 ռ.): Գանձարկղների գործերը վարում են իրենք, վարձողներն ու չինովնիկները: Նույնիսկ ապահովագրվածների «ներկայացուցիչներին» ընտրում են հողագործության, առևտրի կամ արդյունաբերության նախարարները:

Ամերիկայում մինչեւ հիմա բանվորների համար չկապարտագիր ապահովագրություն, վորոնք ստիլված են իրենք կազմակերպելու կամավոր ապահովագրություն, հարկավոր գեպ քում առանց ոգնության չ ֆալու համար. և այս բոլորը գլխավորապես իրենց հաշվին:

Անգլիայում ապահովագրական մուծումները կատարում են վարձողները, պետությունն ու բանվորները: Մուծումներից ազատ են միայն այն աշխատավորները, վորոնք որպես յերեք շիլինգից պակաս աշխատավարձ են ստանում: (այսինքն՝ 1ր. 50կ. քիչ):

Ժամանակավոր անշխատունակության համար նպաստ արվում են հիվանդության 4-րդ որից հաշված. նպաստի չափը, անկախ աշխատավարձից, տղամարդկանց համար սահմանված ե ամսական 30 ռուբլի, իսկ կանանց՝ 24 ռուբլի:

Այս նպաստը ստանալու համար պետք եւ ունենալ «ապահովագրական ստաժ», այսինքն՝ պետք եւ վճարած լինեն 26 շաբաթվա մուծումներ:

Հղության նպաստ արվում ե մոտ 20 ռուբլի (40 շիլինգ), իսկ փաստորեն հիվանդ պառկած որերի համար արվում ե հիվանդության նպաստի չափով:

Ապահովագրական կոմիտեների կազմի մեջ մըտնում են նաև կապիտալիստների և բժիշկների ներկայացուցիչները (դրաֆներ-ազնվականներ):

Գործազրկության դեպքում նպաստ ստանում են նա, ով արգեն 12 շաբաթվա մուծումներ եւ մացրել:

Յեթե գործադուլին մասնակցելու հետեւանելով են աշխատանքից զրկվել, այդպիսիները բոլորովին զրեկվում են նպաստ ստանալու իրավունքից, իսկ խեղճության (սախատության, ջարդվածքների) համար նըպաստ ստանալը կախված ե մի շաբաթ գժվարությունների հետ (պետք եւ դիմել դատարանին և այլն):

8. ՍՈՑԻԾԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅ- ՄԱՆՆԵՐՈՒՄ

Ամերիկայում և Յեվրոպայի և վոչ մի բուրժուական յերկում բանվորների սոցիալական ապահովագրության հիմնական պահանջները չեն բավարպահած:

Այժմ տեսնենք Խորհրդային իշխանության որմէնքները համապատասխանում են բանվոր դասակարգի պահանջներին, թե վոչ:

Ինչպես հայտնի յեւ, մեզ մոտ հիմա տնտեսական նոր քաղաքականություն ե տարվում, վոր կարձառու կերպով կոչվում ե «նեպ»:

Թե ինչից առաջացավ նեպը, ի հարկե այդ մասին ամեն մի բանվոր գիտե. մեզ շրջապատել եյին համաշխարհային գիշատիչները, վորոնք ցանկանում եյին խեղդել մեր հեղափոխական բանվորների ու գյուղացիների ջանքերով ստեղծված հանրապետությունը. այդ արտաքին թշնամիներին ոգնում եյին մեր ներքին թշնամիներ՝ Կոլչակը, Դենիկինը, Յուլյանիչը և ուրիշները.

Մտեղծված ուղմական ճակատների հետևանքով

մեր Հանրապետությունը բաժանվել եր առաջնին մասերի և այս հանգամանքն անդրադառնում եր մեր տնտեսության ու արդյունաբերության վրա:

Երջապատված լինելով զինվորական պայմաններով, մենք հնարավորություն չունեցինք բանվորագյուղացիական հանրապետության համար անհրաժեշտ մթերքներ ձեռք բերելու մասին մտածել և բավականանում եցինք գործադրելով պահեստի պաշարը:

Այժմ, յերբ վերջացավ պատերազմը, Խորհրդային իշխանությունը հնարավորություն ունի կանոնավորելու իր տնտեսությունը:

Ուստի, անհրաժեշտ համարվեց գլխավոր ուշադրությունը դարձնել խոշոր գործարանների, յերկաթուղու ու ծովային հաղորդակցության վրա:

Դրա համար այս տնտեսությունները Խորհրդային իշխանությունը պահեց իր ձեռքում, իսկ փոքր ձեռնարկությունները կապարվ տվակ մասնավոր մարդկանց: Այսպիսով շատերը հնարավորություն ստացան բաց անելու մասնավոր առևտրական ձեռնարկություններ:

«Դուք այլ ևս մեզ համար վտանգավոր չեք, ասում եյին նեղ-ականներին բանվորներն ու զյուղացիները. — ցանկանում եք մեր պրոլետարական հրակողության տակ աշխատել և մեր աշխատավորական Հանրապետության համար ստեղծել նոր արժեքներ՝ խնդրեմ, աշխատեցեք»:

Այսպիսով նորից առաջացան մասնավոր տերեր, վորոնց ձեռքն անցան խորհրդային մի շարք ձեռնարկություններ:

Ստեղծված պայմանների հետևանքով սոցիալական ապահովությունը, վոր պետության հաշվին կը

կատարվում, փոխվեց սոցիալական ապահովագրության՝ աշխատանքն ոգտագրոծողների հաշվին:

Բայց և այնպես, այս նոր տնտեսական պայմաններում ել սոցիալական ապահովագրության վերաբերյալ բոլոր որենքները լիովին համապատասխանում են բանվոր դասակարգի պահանջներին:

Դեռ 3 տարի առաջ, 1921 թ. նոյեմբերի 15-ին ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հրատարակեց դեկրետ, վորով ՍԽՀ Միության մեջ անցկացվեց սոցիալական ապահովագրություն: Այս յերեք տարվա ընթացքում հրատարակվեցին սոցիալական ապահովագրության վերաբերյալ մի շարք նոր ու լրացուցիչ դեկրետներ ու բացադրություններ: Բայց այն ուղին, վոր նպատակադրել եր Խորհրդային իշխանությունը 1921 թ. դեկրետով, անշեղ կերպով տարվում ե մինչև այժմ:

9. ՈՎՔԵՐ ԵՆ ՑԵՆԹՐԱԿԱԼՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՎՈԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

Ներկա որենքների համաձայն սոցիալական ապահովագրությանը յենթարկվում են բոլոր նրանք, վորոնք վարձու աշխատանք են կատարում պետական, հասարակական, կապարվ տրված ու մասնավոր ձեռնարկություններում, կոռպարատիվներում, հիմնակություններում ու տնտեսություններում:

Ինչպես տեսնում ենք, Խորհրդային իշխանության մեջ չկան խորթ ու հարազատ տարրեր, ինչպես այդ ցարի ու ժամանակավոր կառավարության ժամանակ եր, յերբ անաշխատունակության դեպքերում միլիոնավոր աշխատավորներ մնում եյին առանց վորեկ ապահովության:

Այժմ բոլոր վարձու աշխատանք կատարողները համոզված են, վոր յեթե այս կամ այն պատճառով մնում են առանց աշխատանքի, խորհրդային ապահովագրությունն իսկույն իրենց ոգնության կհասնի:

Ներկայումս ՀՍԽ Միության մեջ ապահովագրությունը հասնում է մոտ 6 միլիոնի:

Այս թիվը հետզհետե աճում է, վորովհետև ապահովագրական գանձարկղներն արդեն կազմակերպվել ու իրենց աշխատանքները սկսել են տարածել Խորհրդային Միության ամենախոռն անկյուններումն անգամ:

Վերջին ժամանակներն արդեն ապահովագրական գանձարկղները սկսել են անհրաժեշտ ուշագրությունը դարձնել նաև գյուղի վրա, ապահովագրելով մեծ քանակությամբ բարորակներին, վորոնք մինչև Խորհրդային իշխանությունն ապրում ենին ծանր պայմաններում, զուրկ վորեն ոգնությունից:

10. ՍՈՑԻԵԼԱԿԱՆ ՇՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԵՐԸ

Վերտեղից են վերցնում ապահովագրական մարմիններն իրենց անհրաժեշտ միջոցները, գումարները:

Այդ միջոցները կազմում են այն ապահովագրական մուծումները, վոր մտցնում են միմիայն վարձող դորձատերերը, իսկ բանվորները բոլորովին ազատ են դրամական մուծումներ կատարելուց:

Բացի այդ որենքի մեջ պարզ ասված է, վոր գործատերն իրավունք չունի բանվորի աշխատավարձից դուրս գալու այն գումարը, վոր նա բանվորի համար մտցնում է ապահովագրական գանձարկղը:

Այս բացատրությունը շատ կարևոր է, վորպես-

զի գործատերերից շատերը հնարավորություն չունենան ոգտագործել անդիտակից բանվորներին, կտրելով նրանց աշխատավարձը:

Վարձողն այդ մուծումները մտցնում ե այն չափով, ինչ չափով, վոր իր ձեռնարկության մեջ աշխատանքը վտանգավոր ե բանվորի համար:

Բոլոր ձեռնարկություններում ու հիմնարկություններում աշխատանքի վտանգավորությունը բաժանվում է 4 կարգի:

I կարգի համար մտցնում են 16%

II » » » 18%

III » » » 20%

IV » » » 22%

Սա այսպիս ասած, նորմալ տարիին ե:

Պետական հիմնարկներն ու ձեռնարկները վճարում են ավելի քիչ, այսինքն՝

1) Այն հիմնարկները, վորոնք տեղերի կամ տեղական միջոցներով են պահպան, մտցնում են 10% :

2) Խորհուրդների գործկոմներին պատկանող այն ձեռնարկությունները, վորոնց յեկամուաը 5000 ր. ավել չե, վճարում են 12% :

Ներկայումս մուծումների տարիին վերքաբնական մուծում են. նկատի յե առնվում ծանր արդյունաբերության և տրանսպորտի մուծումները պակասեցնել, վորովհետև մեր հանրապետության տնտեսության այդ յերկու կարեռը ճյուղերը մեծ գումարներ մուծելու հընարավորություն չունեն:

Բայց և այնպիս, այժմ ել Ս. Խ. Հ. Միության մեջ սոցիալական ապահովագրության համար միջին հաշվով ծախսվում է բանվորների աշխատավարձի 14% ից վոր վոչ պակաս:

Այս ել քիչ 0% չե:

Ս. Խ. Հ. Միությունը աշխատավորական հանքապետություն և, — ավելի լավ և ուրիշ բաներում տնտեսել, քան թե բանվորից կարել:

11. ԱՊԵՀՈՎԱԳԻՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԱ- ՐԵԼԸ.

Սոցիալական ապահովագրությունը չայն կերպով տարածելու համար գոյություն ունեն այս մարմինները՝

1) Սոցիալական Ապահովագրության կենտրոնական Վարչություն — կից Աշխատողկոմին, վոր վարում և ամբողջ Խորհրդային Միության սոցիալական ապահովության գործը (համառոտ կոչվում է Սոցկենտրապարչ):

2) Գլխառոցապ (գլխավոր սոց. ապահովագր.) — կից աշխատողկոմատներին՝ Ռուսաստանի, Ռւկրայինացի, Բելոռուսիայի և Ասորկովկասի համար:

3) Յերկրսոցապ — Յերկրային սոց. ապահովագր. վարչություն, — ինքնավար հանրապետությունների ու շրջանների համար (Կիրդիգիստան, Թուրքիստան, Բաշկիրիա, Ռւրալ և այլն), Աշխատողկոմատներին կամ նրանց լիազորություններին կից:

Գլխառոցապը հսկում և ուղղություն է տալիս իր հանրապետական ապահովագրական մարմինների աշխատանքներին, Յերկրսոցապը հսկում է իր յերկրի ապահովագրական գանձարկոների աշխատանքներին

Այս մարմինների գլուխ են կանգնած այնպիսի ընկերներ, վորոնք տանում են համերաշխ աշխատանք պրոֆմիությունների հակողության տակ:

4) Նահանգական սոցապները գեկավարում են իրենց նահանգների սոց. ապահովագրության գործը:

Ներկայումս, յերբ արդեն գանձարկոները կազմակերպված ու կանոնավոր աշխատանք են տանում, նահանգական սոցապ. կազմակերպություններն առտիճանաբար վերացվում են, սրանց աշխատանքը թողնելով նահանգական գանձարկոներին. աս անհրաժեշտ և թե դրամական միջոցներն և ուժերը տնտեսելու և թե ապահովագրական աշխատանքները լայն կերպով մասսաներին մոտեցնելու համար:

5) Տեղերում գավառներում և քաղաքներում գոյություն ունեն ապահովագրական գանձարկոներ, վորոնց կոմիտեներն ընտրվում են պրոֆկազմակերպությունների կոնֆերանսներում:

6) Վերջապես, գանձարկոներից հեռու գտնվող վայրերում կան ապահովագրական բաժանմունքներ կամ գանձարկոների լիազորներ:

Տրանսպորտի — յերկաթուղային, թե ծովային փոխադրության բանվորներն ունեն իրենց համար հատուկ գանձարկոներ:

Անա ապահովագրական մարմինների այն կազմակերպությունը, վոր գոյություն ունի ներկայում և Խորհրդային Միության մեջ:

Խոչպես փոքր բջիջները (ապահովագր. գանձարկոները), նույնպես և «բարձր» մարմինները, աշխատում են պրոֆմիությունների հետ սերտ կապակցված:

Մի խոսքով, ապահովագրական մարմինների վըրա բանվոր մասսաների ունեցած հսկողությունն ապահովված և կրկնակի կերպով իշխանության մարմինների միջոցով, վորտեղ իրենք, բանվորներն են մասնակցում, և պրոֆմիությունների միջոցով, վորոնք կապ են ստեծում վարձու բանվորների ու ծառայողների լայն շրջանների հետ:

Գործատերերն արդեն տեղ չունեն ապահովացրական վարչությունների մեջ. նույնիսկ այդ մասին նրանք մտածել անգամ չեն կարող, վորովհետև՝ Իշխանության գլուխ և անցած պրոլետարիատը:

12. Ի՞նչ է ՏԵԼԻՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԸՊԱՀՈՎԱՅ-ԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ԲՈՆՎՈՐՆԵՐԻՆ.

Սոցիալական ապահովագրությունը, շեշտված և Աշխատանքի Որենսգրգում, — ընդգրկում է իր մեջ բժշկական ոգնության գործը, նպաստ տալը — ժամանակավորապես աշխատունակությունը կորցնելիս (հիվանդության, խեղության, համաճարակի, հղիության, ծննդաբերության, ընտանիքի հիվանդ սննդամբն խընամելն և այլն):

Լրացուցիչ նպաստ բաց թողնելը (մանկան սընողի, խնամելու, և թաղման),

նպաստ բաց թողնելը գործազրկության ժամանակ.

նպաստ բաց թողնելը — հաշմանդամության գեղքում.

նպաստ բաց թողնելը — վարձու աշխատավորի ընտանիքի անդամներին, յերբ մեռնում կամ անհայտ և կորչում նրանց կերպակողը:

Մի խօսքով, բանվորի կյանքի բոլոր դժվարին ըստիներում խորհրդային ապահովագրական մարմինները գալիս են նրան ոգնության:

13. ՆՊԱՍՏ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲԱՐ.

Ժամանակավոր անաշխատունակության նպաստը արվում է հիվանդության որից հաշված մինչև առող-

ջանալը՝ լրիվ աշխատավարձի չափով, նաև հաշմանդամության համար՝ այդպիսին հաստատվելու որից:

Նախկին ցարական և մենշեկիկյան որենքներով հիվանդության նպաստն աշխատավարձի ^{2/3} մասից պիտի չպետք է լիներ. Խորհրդային որենքներով ընդհակառակը՝ աշխատավարձի ^{2/3}-ից պակաս չպետք է լինի:

Թեպետ, յերբ գրամական միջոցները պակասում են, նպաստն ել պակասում է ապահովագրվածի աշխատավարձի միջն ^{2/3}-ը, սակայն ապահովագրական մարմինները գործադրում են բոլոր հնարավոր միջոցները, բանվորներին լրիվ աշխատավարձի չափով բարգարելու:

14. ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ ՊՊԱՀՈՎԱՅԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆիզիքական աշխատանք կատարող հղի և ծընդունակաբեր կանայք ստանում են նպաստ 8 շաբաթվահամար ծննդաբերությունից առաջ և 8 շաբաթվահամար՝ ծննդաբերությունից հետո: Իսկ այն կանայք, վորոնք մտավոր աշխատանքով են զբաղվում, նրանց տրվում են նպաստ 6 շաբաթվահամար ծննդաբերությունից առաջ և նույնքան ել հետո:

Բացի այդ, նորածիններին խնամելու համար ծննդաբեր կանանց տրվում է լրացուցիչ նպաստ 14-ից մինչև 18 րուբլի, նաև սրա մի ^{1/4}-ի չափ (3 ր. 50 կ. մինչև 4 ր. 50 կ.) 9 ամիս շարունակ ամսական նըպաստ՝ մանկան սննդի համար:

15. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՍՏ.

Ովքեբը ունեն իրավունք ստանալու գործազրկության նպաստ.

Այս կ իրավունքը տրվում է բոլոր նրանց, գործնք զուրկ են աշխատատի վորեե. միջոցից, այսինքն զուրկ են աշխատավարձից, կամ արհեստի, առևտի, տնտեսության և այլ միջոցներից.

1) Վորակյալ բանվորներն ու բարձր վորակի մտավոր աշխատանք կատարողները.

2) Այն անչափահաս բանվորներն ու ծառայողները, վորոնք 16 տարեկան հասակից վարձու աշխատանք են կատարել.

3) Վարձու աշխատանքով ապրող միայնակ կանայք, վորոնց խնամքի տակ են գտնվում մինչև 14 տարեկան յերեխաներ.

4) Մինչև 16 տարեկան այն փոքրահասակները, վորոնք թեպետ աշխատանքի տեսչից թույլտվություն ունեն աշխատանք կատարելու, բայց հեռացված են գործից, աշխատանքի վտանգավորության պատճառով.

5) Մեռած կամ անհայտ կորած ապահովագրվածների այն յերեխաները, քույրերն ու յեղբայրները, վորոնք 16-ից մեծ տարիք ունենալու պատճառով, զրկված են նպաստ ստանալու իրավունքից:

6) Կարմիր բանակի այն զորացրվածներն ու մշտական արձակուրդ ստացածները, վորոնք նախքան զինվորական ծառայության մտնելը, վարձու աշխատանքով են ապրել.

7) Այն հաշմանդամները, վորոնց կարելի յե վորեե աշխատանքով ոգտագործել (4, 5 և 6-րդ խմբերին պատկանող հաշմանդամները):

Այս բոլոր հիշված գործադուրկներին տրվում են նպաստ անկախ նրանից, թե ինչքան ժամանակ վարձու աշխատանք են կատարել:

Իսկ վոչ վորակյալ բանվորներին ու ծառայողներին նպաստ տրվում է միայն այն դեպքում, յերբ

նրանք նախքան գործադրկությունը, վորոշ ժամանակով կատարել են վարձու աշխատանք: (Բանվորներից պրոֆմիության անդամները պետք են աշխատած լինեն վոչ պակաս, քան 1 տարի, վոչ անդամները՝ 3 տարի: Իսկ ծառայողներից՝ անդամները՝ 3 տարի, վոչ անդամները՝ 5 տարի):

Ինչպես վոչ վորակյալ բանվորներից ու ծառայողներից պահանջվում են աշխատանքի վորոշ ստաժ:

Շատ պարզ պատճառով. սրանով Խորհրդային Իշխանությունն աշխատում են վոչ պրոլետարական եկեմնատներին զրկել նպաստ ստանալու հնարավորությունից:

Մեր միջոցները սուլ են, ուստի անհրաժեշտ են ապահովել իսկական պրոլետարներին, վորոնք մինչև աշխատանքի բորսային դիմելը վորոշ ժամանակ աշխատանք են կատարել, իսկ յեթե մինչև գործազրբեկությունը նա միայն մի քանի որ են աշխատել, ել բնչ պրոլետար ենա:

Այս սահմանափակումն ուղղված է գլխավորապես նախկին վոչ աշխատավորական եկեմնատների դեմ, վորոնք մինչև հեղափոխությունն իրենք են ոգտագործել ուրիշների աշխատանքը:

Իսկ ինչո՞ւ աշխատանքի ստաժ չի պահանջվում վորակյալ բանվորից:

Վորովհետև յեթե նա ընդունակ են ու մասնագետ վորոշ վորակյալ աշխատանքի ու պրոֆեսիալի, (փականակագործ, դարբին) կնշանակի նա պատահական մարդ չե, վոր այսոր աշխատում են, վաղը շուկայում առևտուր են անում, այլ ապրում են զուտ իր պրոֆեսիալի աշխատավարձով:

Մեր բանվորա-գյուղացիական հանրապետության համար այդպիսի մարդիկ անհրաժեշտ են. ինչ-

քան շատ լինի մեզ մոտ վորակյալ ուժեր, այնքան ավելի շատ կարող ենք սգտագործել մեր յերկը հարստությունը և բարելավել բանվոր դասակարգի դրությունը:

Այս թե ինչու վորակյալ բանվորներն ավելի լավ են ապահովված, քան վոչ վորակյալներն ու ծառայողները:

Այսպես, Մոսկվայում և Լենինգրադում վորակյալ բանվորները ստանում են մինչև 12 սուրի, մյուս քաղաքներում՝ 7 ո. 50 կ. մինչև 10 ո. Վոչ վորակյալները Մոսկվայում և Լենինգրադում ստանում են 8 ո., այլ քաղաքներում 5-ից մինչև 6 ո. 65 կոպ.:

Մեկ տարվա գործազրկության գեղքում, նպաստ տրվում ե վեց ամսվա համար. յեթե որինակ վարպետ ՌԽԱՆԸ գործազրկ է յեղել 1924 թ. հունվարի 1-ից և գործի յե մտել 1925 թ. սեպտեմբերին, ուրեմն նա պետք ե ստանա նպաստ—1924 թ. հունվարի 1-ից մինչև հունիս ամիսը (6 լրիվ ամիս), և 1925 թ. հունվարի 1-ից մինչև հունիսը (դարձյալ 6 ամիս):

Միևնույն ժամանակ որենքը թույլ ե տալիս համաձայնության գալով պլրոֆմիության խորհրդի հետ, գործազրկության նպաստ տալու ժամանակամիջոցը յերկարել ինչպես վորակյալ, նույնպես և հատուկ գեղքերում վոչ վորակյալ բանվորների համար:

Գործազրկության նպաստ ստանալու իրավունք ունեցող բոլոր հղի ու ծննդաբեր կանայք (յեթե գործազրկության 6 ամիսը լրացրած ել չլինեն), նըպաստ ստանում են վորպես վորակյալ բանվորները, 6 շաբաթվա համար ծննդաբերությունից առաջ, 6 շաբաթ ել հետո:

Ինչպես սրանք, նույնպես և նպաստ ստացող գործազրկների կանայք իրավունք ունեն ստանալու

լրացուցիչ նպաստներ՝ մանկան ինամելու ու սննդի համար, ընտանիքի անդամների թաղման և այլն:

Ի հարկե, չի կարելի ասել վոր սրանով գործազրկի բոլոր կարիքները բավարարվում են. բայց և այնպես, մեր այս սուզ ժամանակներում գործազրկություններին ցույց տված այս սգնությունը ևս մեծ է:

Պետք ե շեշտել, վոր ՄԽԶՄիության մեջ գործազրկության նպաստ են ստանում վոչ թե մեկ կամ յերկու, այլ հարյուր հազարավոր գործազրկներ. 1924 թ. մայիսին նպաստ ստացել են 400000 մարդ, ներկայումս ավելի շատ են ստանում):

Պարզ ե ուրեմն, վոր գործազրկների այս հսկա բանակը ատարեկան բավականին խոշոր գումարներ են պահանջում: Յեզ Խորհրդային Խշանությունն ապահովական մարմինների միջնորդ յուր բոլոր ուժերըն և լարում ու միջոցներ փնտրում գործազրկներին բավարարելու համար:

16. ՀԱՇՄԻՇԹՈՒԹՅՈՒՆ, ԲՇԽՄ.ՏՈՊ. ՁԵՐ-ՔԻՑ ԶՐԿՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊ ՀՅՎ. ԳԻ- ԲՈԽԹՅՈՒՆ Ը

«Հաշմանդամության գեղքում սոցիալական ապահովության իրավունքից ոգտվում են բոլոր այն վարձու աշխատողները, վորոնք իրենց աշխատուուկությունը կորցրել են իրեղության (սախատ), հիվանդության և ծերության հետևանքով»:

Այսպես և ասված Աշխատանքի Որենսգրքում: Պետք ե ավելացնել վոր ծերության հետևանքով աշխատուուկություն կորցրածները նպաստ կարող են ստանալ միայն այն գեղքում, յերբ նրանք վարձու աշխատանք են կատարել 8 տարուց վոչ պակաս:

Այս սահմանափակումը շատ տեղին է, վորովհետեւ ծերությունից քայլայվում ու անդործնական են դառնում նաև վոչ աշխատավորականները, ահա թե ինչպես:

Յեթե իսկական պրոլետարն իր պատանեկական հասակից աշխատելով գործարանում քայլայում և իր որդանիքն ու հաշմանդամ դառնում, ապա շատ-շատերը նույն վիճակին են համում շնորհիվ իրենց ցոփ ու շոայլ կյանքի:

Այժմ վարձու բանվորների ու ծառայողների մեջ կան այնպիսիները, վորոնք ապրում են աշխատավորական կյանքով նրա համար միայն, վոր պրոլետարական հեղափոխությունը զրկել ե նրանց հարստությունից:

Ի հարկե, ներկայումս չի կարելի խոսել այդպիսիներին ապահովելու մասին, քանի վոր մեր հանրապետությունը ստիպված ե խնայելու իր ամեն մի կոպեկը, վորպեսզի ապահովի այն պրոլետարներին, վորոնք իրենց բոլոր ուժերը սպառել են աշխատանքի ու ծառայության վրա:

Այդ պատճառով ել ծերության նպաստ ստանալու համար պահանջվում ե 8 տարվա վարձու աշխատանքի ստաժ:

Բայց և այնպես, սոցիալական ապահովագրության մարմիններին չիրավունք ե տրվում հատուկ գեպքերում նպաստ նշանակել անկախ վարձու աշխատանքի ստաժից»:

Հիվանդության կամ խեղության (սախատ) հետևանքով հաշմանդամ դաձողները բոլորն ել ապահովում են, անկախ նրանից, թե ինչքան ժամանակ են վարձու աշխատանք կատարել մինչև հաշմանդամ դառնումը:

Բոլոր հաշմանդամները բաժանվում են 6 խմբերի, վորոնցից նպաստ տրվում և միայն սկզբի 3 խմբերին, այսինքն՝

1) Այն հաշմանդամներին, վորոնք վոչ միայն անընդունակ են իրենց ապրուստի համար աշխատանք կատարելու, այլ կարիք են զգում կողմնակի ոժանդակությամբ բավարարելու իրենց սովորական կենսական պահանջները:

2) Այն հաշմանդամներին, վորոնք վոչ մի աշխատանքի ընդունակ չեն, բայց կարիք չեն զգում մշտական խնամքի:

3) Այն հաշմանդամներին, վորոնք ստիպված են իրենց սովորական պրոֆեսիալից հրաժարվել և ընդհանրապես, անընդունակ են կանոնավոր պրոֆեսիոնալ աշխատանքով զբաղվելու, բայց կարող են պատահական, ժամանակավոր և այն ել թեթև աշխատանք գտնել:

Ահա այս 3 խմբերին ե նշանակված ամսական նպաստ, այս չափով.

1) Առաջին խմբի համար Մոսկվայում և Լենինգրադում տրվում ե մինչև 20 ո., մյուս շրջաններում 14-ից մինչև 18 ո.

2) Յերկրորդ խմբի համար Մոսկվայում և Լենինգրադում տրվում ե 13 ո. 35 կոպ., մյուս շրջաններում 9 ո. 35 կոպ. մինչև 12 ո.

3) Յերրորդ խմբի համար Մոսկվայում և Լենինգրադում մինչև 10 ո., մյուս շրջաններում 7—8 ո.:

Մնացած հաշմանդամներին արդեն աշխատանք ե տրվում:

Խեղության հետևանքով հաշմանդամ դարձածների համար ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծված:

Արանք բաժանվում են 2-կարգի, Առաջին կարգին են պատկանում այն հաշմանդամները, վորոնք խեղություն են ստացել մինչև 1924 թ. հունվարի 1-ը. այսպիսիներին նպաստ տրվում է այնքան, վորքան նույն աշխատանքը կատարող ու նման վորակի առողջ բանվորի կամ ծառայողի միջին ամսական աշխատավարձն է կազմում:

Պարզ ասած՝ յեթե վարպետ Արամը «առաջին ձեռքի» փականագործ է և խեղություն և ստացել նրան նպաստ և նշանակվում այնքան, վորքան նույնպես «առաջին ձեռքի» փականագործ վարպետ Ռուբենն է աշխատավարձ ստանում:

Յերկրորդ կարգին են պատկանում այն հաշմանդամները, վորոնք խեղություն են ստացել 1924 թ. հունվարի 1-ից հետո:

Մրանց արդեն նպաստ նշանակվում է իրենց աշխատած վերջին յերեք ամիսների միջին աշխատավարձի չափ:

Այլ կերպ ասած՝ յերկրորդ կարգի հաշմանդամներին նպաստ տրվում է այնքան, վորքան նշանք աջևակարգ ելին ստանում նախ քանի իրենց աշխատավարձը:

Հարկավոր է նաև, վոր սովորական հաշմանդամներին նպաստ նշանակելիս նկատի յետ սոնվում նըրանց նյութական վիճակը, իսկ խեղություն ստացածներին նպաստ և նշանակվում անկախ դրանից:

Անցյալում, ցարական Ռուսաստանում, խեղված (սախատ) բանվորի գրությունը շատ վատ եր. նման դեպքերում նա պետք է կարողանար դատարանի առաջ ապացուցել, վոր այդ խնդրում մեղավոր է գործ, ծատերը, Բայց վորովհետև վերջինս շնորհիվ իր հարստության հնարավորություն ուներ դիմելու հմուտ

փաստաբանների ոգնության, բանվորներին շատ դժվարությամբ եր հաջողվում համեմել իրենց նպատակին:

Լինում ելին որինակ այսպիսի գեպքեր, բանվոր խեղություն եր ստանում և պահանջ եր դնում դատարանի միջոցով իրեն բավարարելու. յերկար ձգձգվում եր այս գործը և յերբ վերջապես դատարանը բանվորի ոգակին ե դատավճիռ հանում, պատահում եր, վոր տուժողը վորոշում հանելուց յերկու տարի առաջ արդեն մեռած եր լինում:

Այսպես եր առաջ Ռուսաստանում, այսպես և այժմ ել մյուս կապիտալիստական յերկրներում:

Մեզ մոտ լրիվ աշխատավարձի չափ նպաստ տրվում է նույնիսկ այն գեպքում, յերբ անկախ աշխատանքից, բանվորը տեղի գործարան գնալիս, կամ բնդիմակառակը, տուն վերադառնալիս ե խեղություն ստանում:

Մի խոսքով, Խորհրդային Հանրապետության բանվորները կարող են հպարտությամբ ասել՝

«Զուր չեր մեր պայքարը Խորհրդային իշանություն ձեռք բերելու համար»:

* *

Յերբ ապահովագրվածը կամ նրա ընտանիքի անաշխատունակ անդամը մեռնում է, տրվում ե թաղման համար ևս միանվագ նպաստ 20 ռուբլի՝ Մուկըվայի և Լենինգրադի համար, 14—18 ռ. ամբողջ ՍևՀՄիության համար:

Ապահովագրվածի մահվան կամ անհայտ կորչելու դեպքում, նրա խնամքի տակ գտնվող ընտանիքը չի զրկվում սոցիալական ապահովագրությունից, այլ ոգնությունը շարունակվում է ընդհանուր կարգով:

Թոշակի չափը վորոշելիս, նկատի յետ առնվում,

թե ինչ պատճառներից ե առաջացել ընտանիքի ինաւ-
մողի մահը և ընտանիքի անաշխատունակ անդամնե-
րի թիվը. յեթե անաշխատունակ անդամը մեկ հոգի
յէ, թոշակ արվում ե առաջին կարգի հաշմանդամու-
թյան նպաստի $\frac{1}{3}$ -ի չափ, յեթե 2 հոգի յէ $\frac{1}{2}$, իսկ
յերեք հոգու համար արվում ե թոշակի $\frac{3}{4}$ մասը:

* *

Խորհրդային սոցիալական ապահովագրության
մասին լրիվ գաղափար կազմելու համար անհրաժեշտ
ե ավելացնել, վոր այն անձնավորությունները, վո-
րոնք հատուկ ծառայություն են մատուցում Հանրա-
պետությանը, թե հեղափոխական և թե պրոֆեսսիո-
նալ գործնեյության կամ գիտության, գեղարվեստի ու
տեխնիկայի ասպարեզներում, իրավունք ունեն ստա-
նալու պերսոնալ թոշակ՝ խորհրդային և պրոֆեսսիո-
նալ պատասխանատու աշխատակիցների ամենաբարձր
սոճիկի կրկնակի գումարի չափ:

17. ԱՊԱՀՈՎԱԳԻՐՎԱԾՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԸ

Ի՞նչպես ե դրված բանվորների ու ծառայողների
բժշկական ոգնության գործը:

Այս ուղղությամբ և Խորհրդային Ռուսաստանը
խողոր քայլ ե կատարել:

Թե ապահովագրվածներին և թե նրանց ընտա-
նիքների անդամներին ցույց ե տրվում բժշկական
բոլոր տեսակի մասնագիտական ոգնություն.

1) Բուժաբաններում,

2) ծննդաբերական բուժաբաններում,

3) հիվանդանոցներում, լրիվ բժշկական ինս-
քով և

4) կուրորտային սանատորական ոգնություն:
Բոլոր անհրաժեշտ գեղերը արվում ե ձրիապես:
Վորպեսզի պարզ գաղափար կազմվի, թե ՍԽՀ
Միության մեջ բանվորների ու ծառայողների բուժ-
ման գործի վրա ինչպիսի հատուկ ուշադրություն ե
դարձվում, բավական և շեշտել, վոր 1924 թվականին
սանատորիաներում ու կուրորտաներում բուժվել են մի
քանի տասնյակ հազար բանվորներ ու ծառայողներ:

Իսկ հանգստի տներում կազմուրվել են մոտ
200000 մարդ, վորոնցից 80 % ը բանվորներ:

Ահա թե ինչ են զրում բանվորները այդ մասին
թերթերում:

«Հիվանդները սանատորիաներում լավ ընդունե-
լություն են գտնում: Մնունդը տրվում ե բավական
առատ կերպով, որական հիգ անդամ. միս, հաց, ձու,
կարագ, մեղր—վոր «աչք և կշտացնում» ուղղակի:

Սանատորիայում բանվորները խոշոր մեծամաս-
նությունն են կազմում: Ներկա ընթացիկ սեզոնին
մեր սանատորիան են ընդունվել 270 մարդ, վորոն-
ցից 130 արդյունաբերող բանվորներ են:

Մեր սանատորիան գտնվում ե բավականին ու-
շագրավ վայրում:

Սարերի խորունկ հովատում ընկած ե «Կարաբաշ»
գյուղը, վորի կենտրոնում գտնվում ե սառնորակ աղ-
բյուրներից կազմված լիճը, որա ափին ել կանգնած
ե սանատորիան:

Հարավ-արևեմտյան մշտական քամին անդադար
մաքրում ե ողբ, վորն իր առողջարարությամբ հետ
չի մնում կիսավորմակու ողից:

Այս բոլորը հրաշալի նպաստավոր պայմաններ
են թոքային հիվանդությունների բուժման համար:

Լեռան կանաչ գագաթից փշում ե մեղմ զեփյու-

ու և ողը լցնում դաշտային ծաղիկների ու սոճիների բուրմունքով:

Ցերկաթուղային արհեստանոցի նոսր միրուքով ծերունի փականագործը վերանդայում պառկած, շփելով իր ստամոքսը, լիքը կրծքով ոդ եր ներշնչում:

— Այստեղ արդեն փականագործարանը չի... այ քեզ ոդ, հալած յուղի պես անցնում և մարմնիս ներսը...

Քիչ հետո, այգում մահճակալների և խոտերի վրա պառկել կամ նստել են հիվանդները: Յերկու, յերեք որ և ինչ բոլորն ել յեկել են, բայց լեռնային ոդը, հանգիստն ու լավ սնունդը իսկույն բարձրացրել եյին տրամադրությունները:

Սանատորական բուժումը հիվանդների վրա զգալի կերպով ազդել եր. 97 դուրս գրված հիվանդներից առողջացել եյին 82 հոգի և միայն մնացած 15 հոգին եյին մնացել անփոփոխ: Բուժվողների 84 ٪/0 մարմնի քաշն ավելացել ե, շատերը նույնիսկ 22 և ավելի զրվանքա:

Արեի տակ և անտառի ազատ ոդի մեջ բանվորները շատ լավ են զգում իրենց. յերեկոյան դեմ, կուշտ ճաշից հետո խումբ-խումբ հավաքվում ու նըմիրվում են զանազան խաղերի կամ զրուանքի, տպավորություններ են փոխանակում իրար հետ և խոսում այս կամ այն հարցի շուրջը:

Վերե, վերանագայի անկունում չուրս հոգի «չաղացրել են վաթսուն վեցը»:

Իսկ յերբ արեւ արեւ կանցնի սարի հետեւ, անտառում կտարածվի յերգի ձայներ:

Զանգից հետո ամբողջ սանատորիան քնում և և միայն սարերից փչում թեթև քամին սոճիների մեղմ շշունջն և տարածում չորս կողմը:

(«Ուբալի բանգոր» թերթ. հուլ. 19)

«ԿԱՐՄԻՐ ՊՐՈՖԻՆՑԵՐՆ» ՀԱՆԳՍՏԻ ՏԱՆԼ

Նախկին «Վիրովոն» մի ժամանակ հաստափոր գործարանատիրոջ սեփականությունն եր կազմում:

Այժմ «Կարմիր Պրոֆինտերն» անվան տակ ապահովագրվածների համար հանգստի տուն եւ Շատ հեռվից, գեռ նավահանգստին չհասած՝ աչքի յենկնում վոլորապտույտ ափը, ծածկված խիտ խոտով: Այստեղ, յեղենիների, հացենիների ու հարավային փարթամ բուսականության մեջ գեղեցիկ կերպով նշմարվում ե հօյակապ սպիտակ շենքը՝ գործարանատեր Վիտովի նախկին պալատը, շինված բանվորների կոպեկներով գնված արյունով: Շինության վրա ծածանվում ե կարմիր զբուծը: Սիրտ հրճվանքով և լըցվում, յերբ տեսնում ես, վոր այժմ այստեղ հանգստանում են նրանք, վորոնք ավելի իրավունք ունեն, քան նախորդները:

Հանգստացողների թիվը ե 112, վորոնք տեղավորված են յերեք կեց շենքերի մեջ, սրանցից մեջ տեղինը քարեց և շինված, վորին հանգստացողները «կենտրոնական» անունն են տվել. մյուս յերկուսը փայտե շենքեր են, վորոնց «կամչատկա» և «Հեռավոր Արևելք» անունն են կնքել՝ գարձյալ հանգստացողները: Վերջինում տեղավորված են աշխատանքի հերոսուհիները՝ կին աշխատավորներ: Նրանցից շատերը 30—40 տարի աշխատել են արդյունաբերության վրա...

«Վերջապես մեր մեջքերն ուղղվեցին», ասում եյին նրանք-Խորհրդային իշխանությունն եր, վոր մեզ ևս հնարավորություն տվավ հանգստի տուն գալու»:

Հերոսուհիներն իրենց բավականությունն ար-

տահայտում եյին յերգերով ու հին ժողովրդական պարերով:

«Գոնե Խորհրդների ժամանակ մի քիչ կանոնավոր կապը ենք. ախր մենք յերբեք եսպես չենք ապրել, ինչպես հիմա—խմի, կեր, ման յեկ, ու հանգըստացիր քեզ համար»:

«Ենորհակալություն կոմմունիստներին, շնորհակալություն բոլշևիկներին. կվերադառնանք մեր քաղաքները և բոլորը կպատմենք, թե ինչպես են նրանք հոգ տանում բանվորների մասին»:

(«Կարմիր Աշխարհ», Կոստրոմա)

ԶՈՒՀԸՆՈՒՅԻՆ ԱԼՈՒՊԿԾՈՒՄ

«Հունիս տմամբն պարզվեց, վոր յես թոքախտավոր եմ և ինձ ուղարկեցին Ղրիմ, Ալուպկայում բուժվելու:

Յես բոլորովին անզրագետ եմ և մինչև այդ նույնիսկ չգիտեյի, վոր Ղրիմը այդպիսի մի լավ տեղ է, վորտեղ մարդիկ հանգստանում են ու հիվանդություններից բուժվում:

Այժմ արդեն իմացա ինչ ասել ե Ղրիմը և ինքս այնտեղ բուժվեցի ու հինգ շաբաթ շարունակ հանգըստացա:

Մենք, հիվանդներս ապրում եյինք ծովափին, Ալուպկայում. մեծ, լուսավոր ու մաքուր տուն եր, Յեղանակը միշտ տաք եր ու խաղաղ, Կերակրվում եյինք շատ լավ, տանը յերբեք այդպես չեյինք մնվում:

Յես կարծում եմ, վոր այստեղ, այսպիսի պայմաններում առանց վորևէ գեղի յել կարելի յեւ առողջանալ:

Դե, ինարկե, յես հինգ շաբաթից հետո առողջացա, մարմնիս քաշն ել 18 գրվանքա ավելացավ. իսկ թոքերս բոլորովին չեն ցավում:

Պարզ ե, յեթե չլիներ ե. Իշխ., յես չեյի տեսնիլ Ղրիմը, ինչպես իմ ականջի հետեւ, և այժմ ով ե իմանում կորած լինեյի բոլորովին»:

Անինյան գործարանի Զուհակ. Վ. Տ. Ֆիլիպպովա
(«Ռուսի բանվոր», Մեզու 3-ին)

ՀԱՄՈԶՎԵԼ Ե

Մոսկվայի փոստ-հեռազբառան 10-րդ եքսպեդիցիայի բենակիր ընկեր Կ. վոր մի ժիր կին եր, միշտ անբավական եր ու հայնոյում եր Խորհրդացին Իշխանությանն ու բոլշևիկներին: Լավ չեր ապրում նա: Հաճախ աղոթում եր աստծուն, ոգնություն եր խընդրում նրանից, բայց բոլորը ի զուր:

Այս գարնանը նա յեկավ Բանվորական Կոմիտեն—ոգնություն խնդրելու:

Կոմիտեն ուղարկեց նրան կուրոք բուժվելու:

Մի քանի ժամանակից հետո նա նամակ և գլուրում, լի շնորհակալությամբ, վորի մեջ հայտնում ե, վոր մինչև այժմ վոչ վոր իշեն այդպիսի ոգնություն չի ցույց տվել ինչպես Բանվորական Կոմիտեն: Ուրախանալով, վոր հիվանդ ձևոքը սկսել է լավանալ, նա զբում ե:

«Այժմ յես ուղղակի ամաչում եմ, նոր եմ գիտակցում, թե ով ե մեր աշքերը բաց արել ու ցույց տվել իսկական գրախտի ձանապարհը»:

Այս արքայությունը ստեղծեց մեզ համար ընկ. Անինը և նրա թանկագին ընկերները, վորոնք գնում են նրա ուղիով:

Յես շատ զարմացա, վոր դուք ուշադրություն
գարձրիք ինձ պես մի անգիտակից կնոջ վրա և հո-
գացիք իմ ցավերը:

Մինչև հիմա մենք աստծուծ շատ սպասելնքներ
ունեյինք և անվերջ խնդրում եյինք նրան, բայց
նա մեզ վոչինչ չտվավ. մեր աշքերը փակ եյին...

Աժմ արդեն հասկացանք, ով և մեզ համար ար-
քայություն ստեղծում և ինչպես:

Մենք այս բոլորին յերբեք չեյինք հասնի, յեթե
չինեյին մեր ընկեր բանվորները, վորոնք այս բո-
լորը իրենց արյունով ձեռք բերին:

Շնորհակալություն ձեզ, վոր այդպես համրերա-
տար եք մեզ նման անգիտակիցների վերաբերմամբ:

(«Պրավդա» 30 հուլ.)

18. ՅԵԶՐԱՓԱՎԿԱԽԵՎ

Միայն Խորհրդային Իշխանությունն է, վոր
լայն կերպով իրականացնում և սոցիալական ապա-
հովազրությունը, Բայց և այնողևս, վերջնական լու-
ծումն չենք տվել այս խնդրին և զիս ևս շատ աշխա-
տանք պետք է թափենք, բանվորության լիակատար
ապահովագրության համար:

Սոցիալական ապահովագրության բարելավման
միակ ուղիղ ճանապարհն է աշխատանքի արտադրա-
գականության բարձրացնելը:

Ինչքան հարուստ լինի Խորհրդային Իշխանու-
թյունը, այնքան ավելի լավ ապահովություն
կստեղծի բանվորության համար, վորովհետև մեր
հարստություններն աճում են վոչ թե բուրժուա-
հարստահարթիչների համար, այլ համայն աշխատավո-
րության պետքերի համար:

Աշխատավոր, մուրճով հեծել զարդարվին և հի-
շեր՝ վոր դու ինքդ պետք ե կռես ու կոփես քո նոր
կենցաղը:



Աշխատավոր

ՀՀ Ազգային գրադարան



NL0212758

31

Գիր

44.166

